ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

21-ը հունիսի 2024թ.

Շնորհավորական ուղերձ
Բուժաշխատողի մասնագիտական օրվա առիթով

Հունիսի 21-ին նշվում է բուժաշխատողի մասնագիտական օրը, որի կապակցությամբ ջերմորեն շնորհավորում եմ ոլորտի ներկայացուցիչներին, բժիշկներին, բուժքույրերին և օժանդակող ողջ անձնակազմին:

Բժշկությունը մարդկության կյանքում կենսական կարևոր նշանակություն ունեցող գործունեություն է, որը պահանջում է բուժաշխատողներից մարդկային բացառիկ որակների ու մասնագիտական բարձր պատրաստվածության համադրում: Մեր հասարակության մեջ մեծագույն հարգանք ու պատիվ են վայելում իրենց կոչմանն արժանի սրտացավ բժիշկները, ուշադիր ու բարեհոգի բուժքույրերը:

Հարգարժա՛ն բժիշկներ.

Գնահատելի է ձեր նվիրումն ու մարդասիրությունը: Մեր հայրենակիցների առողջության պահպանմանն ու վերականգնմանն ուղղված ձեր շուրջօրյա աշխատանքը առաքելություն է, որը անկախ բարդություններից՝ պատվով իրականացնում եք նաև արտակարգ պայմաններում, պատերազմական և համաճարակային իրադրությունում:

Մասնագիտական օրվա առիթով կրկին շնորհավորելով՝ մեր նվիրյալ բուժաշխատողներին մաղթում եմ առողջություն, բարեկեցություն և հաջողություն իրենց վստահված պատասխանատու և շնորհակալ գործում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ